Adventure & Sport

Tourisms in Armenia

Արկածային տուրիզմ

Ընդհանուր տեղեկություն արկածային տուրիզմի մասին՝

Արկածային տուրիզմը ենթադրում է ոչ ստանդարտ տուրերի կազմակերպում, օրինակ՝ այցելություն դեպի գործող հրաբուխներ, կղզիներ, ջրվեժներ, քարանձավներ, աղետի գոտիներ և այլ վայրեր, ինչպես նաև սաֆարի (որսորդություն, ձկնորսություն, լուսանկարչություն և այլն), ռաֆտինգ, շուրջերկրյա նավարկություն (յախթինգ), սպելեոտուրիզմ:



Արկածային տուրիզմը Հայաստանում

7 տարվա ընթացքում Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվը մի քանի հազարից հասել է կես միլիոնի: Սա փաստում է, որ զբոսաշրջիկները հետաքրքրված են արկածային տուրիզմով, հատկապես՝ Հայաստանի արկածային տուրիզմով:

Հայաստանն արկածային տուրիզմի զարգացման համար ունի մեծ հեռանկարներ: Հայաստանի լեռները դժվարամատչելի չեն եւ գրավում են բազմաթիվ արկածասեր զբոսաշրջիկների ամբողջ աշխարհից: Հայաստանի ամենաբարձր լեռը Արագածն է՝ 4090 մ, որը կարծում եմ զբոսաշրջիկների աճի մեծ առիթ է: Իրականացվում են նաև այլ ուղղություններ՝ դեպի Աժդահակ, Արմաղան, Հատիս, Թեղենիս, Խուստուփ և այլն:

Ձիավարությունը Հայաստանում

Հայաստանը հիանալի երկիր է ակտիվ կյանքի սիրահարների համար, որոնք սիրում են ձիավարել: Հայաստանում ձիավարությունը որոշ չափով զարգացած է: Այստեղ, փորձառու մասնագետների հետ միասին, զբոսաշրջիկները կարող են հեշտությամբ սովորել ձիավարել: Ըստ վիճակագրության զբոսաշրջիկները ամենաշատը արձակուրդներին են գալիս Հայաստան ՝ հենց ձիավարության համար: Ձիավարության Հայաստանի ամենահայտնի վայրերից է Ենոքավան գյուղը, որը գտնվում է Տավուշի մարզում:

Օդապարիկով թռիչքը Հայաստանում

Օդապարիկով թռիչքն էլ է արկածային տուրիզմի մեջ մտնում: Զբոսաշրջիկները, թռչելով Հայաստանի օդային տարածքով, կարող են հիանալ, զմայլվել Հայաստանի գեղեցիկ լանդշաֆտներով եւ նաեւ դրական զգացողություններ ստանալ: Օդապարիկով կարող ես թռչել ոչ միայն ամռանը, այլ ` տարվա մեջ երբ ցանկանաս: Վերջին շրջանում ` այս տարի հունվարին, օդապարիկով բացառիկ թռիչք էր իրականացվել ` Գյումրիից Արագած լեռան գագաթների վրայով:

Քարանձավային տուրիզմը Հայաստանում

Հայաստանի ամենաշատ այցելվող ու հայտնի քարանձավներից է Արջերի քարանձավը: Այն գտնվում է Վայոց ձորի մարզում ՝ Նորավանքի վանքային համալիրի մոտ: Քարանձավն ունի ընդհանուր առմամբ 3,5 կմ երկարություն, որտե կան հսկայական դահլիճներ, որոնք իրար են միանում նեղ միջանցքներով, որոնցով անցնել հնարավոր է միայն սողալով: Այնտեղ գտնվել են նաև արջերի մի շարք ոսկորներ: Արջերի քարանձավ մտնել պետք է միայն ուղեկցորդի հետ, այլապես վտանգն անխուսափելի է...

Հայաստանը զբոսաշրջիկներին կարող է գրավել ոչ միայն իր լեռներով և ժայռերով, այլ նաև ՝ մեծ թվով քարանձավներով, որոնց մեծամասնությունը տարիներ շարունակ մնում է անհայտ նույնիսկ հայաստանցիների համար:

Թռչունների քարանձավ

ՀՀ-ի ամենահայտնի քարանձավներից է նաև՝ Թռչունների քարանձավը կամ Արենիի քարանձավը:

Այս քարանձավում 2008 թ. սեպտեմբերին պեղումների արդյունքում հայտնաբերվել է աշխարհի ամենահին կոշիկը: Զարմանալի է, բայց փաստ, որ կոշիկը պահպանվել է Թռչունների քարանձավի զով և չոր պայմանների շնորհիվ: Թռչունների քարանձավի այս հետաքրքիր փաստն էլ կարող է պատճառ հանդիսանալ, որպեսզի այստեղ զբոսաշրջիկների թիվը անհամար լինի:

Sport tourism in Armenia

Սպորտը զբսաշրջության մեջ

Զբոսաշրջությունն ու սպորտը փոխկապակցված են և փոխլրացնող: Սպորտը՝ որպես պրոֆեսիոնալ, սիրողական կամ ժամանցային գործունեություն, ներառում է զգալի քանակությամբ ճանապարհորդություններ՝ խաղալու և մրցելու տարբեր ուղղություններով և տարբեր երկրներում: Սպորտային խոշոր իրադարձությունները, ինչպիսիք են Օլիմպիական խաղերը, ֆուտբոլը և ռեգբիի առաջնությունները, ինքնին դարձել են զբոսաշրջության հզոր գրավչություններ՝ շատ դրական ներդրում ունենալով հյուրընկալող վայրի զբոսաշրջային իմիջի վրա:

Սպորտային տուրիզմ Հայաստանում

Մարդկանց մեծ մասը Հայաստանը ճանաչում է որպես հարուստ պատմություն և մշակույթ ունեցող երկիր: Նաև այս տարածաշրջանն անմոռանալի տպավորություններ է թողնում արկածների սիրահարների համար. տարեցտարի ավելանում է էքստրեմալ և ակտիվ տուրիզմ ընտրողների թիվը Հայաստանում: Լեռները, ժայռերը, կիրճերն ու անտառները գրավում են նման հանգստի գիտակներին: Ինչպե՞ս են դինամիկ ապրելակերպի սիրահարներն իրենց հանգիստն անցկացնում այս զարմանահրաշ երկրում:



Արշավային և լեռնային տուրեր Հայաստանում

Լեռների ու ժայռերի առատության պատճառով Հայաստանում վերջին տարիներին էքստրեմալ տուրիզմը մեծ թափ է հավաքում: Արշավային երթուղիները բաժանված են տարբեր մակարդակների դժվարության:

Նման սպորտաձևերը ներառում են պարապլաներինգ, քարանձավ , ռաֆթինգ, ֆրիռայդ, լեռնագնացություն, դայվինգ և շատ այլ սպորտաձևեր, որոնք մենք անվանում ենք էքստրեմալ: Կան պարզ մեկօրյա երթուղիներ, որոնք հարմար են ցանկացած տարիքային կատեգորիայի: Կան ավելի բարդ էքստրեմալ շրջագայություններ, որոնք նախատեսված են պրոֆեսիոնալների և էքստրեմալ սպորտի սիրահարների համար::

Sport, travel, mountains & extrim

Քաղաքներում չկան քարանձավներ, խորություններ, բարձունքներ, լեռնային գետեր, հետևաբար, օրինակ, ռաֆթինգը, պարապլայդինգը, մեր պայմաններում հնարավոր է միայն տեսականորեն: Իսկ պրակտիկայի համար բնական պայմաններ և սարեր են պետք:

Այդ իսկ պատճառով նման մարզիկներն իրենց հիմնական մարզումները անցկացնում են այն երկրների ուսումնամարզական հավաքներում, որտեղ կան համապատասխան պայմաններ որոշակի մարզաձևերի համար: Ճանապարհորդություն դեպի լեռներ, պարապլայդինգ, լեռնային գետերի վրա ռաֆթինգ - այս ամենը կապված է տարբեր երկրներ էքստրիմալ ճանապարհորդությունների հետ, հետևաբար մարզումների և հանգստի այս տեսակը կոչվում է սպորտային տուրիզմ:

Սպորտային տուրիզմի գրեթե բոլոր սիրահարները նախընտրում են լեռնային վայրերը: Եվ սա պատահական չէ: Բազմաթիվ էքստրեմալ սպորտաձևեր կապված են լեռների հետ՝ պարապլաներային թռիչք, ռաֆթինգ, լեռնագնացություն, ֆրիռայդ: Առանց լեռների չկա և չի կարող լինել ոչ մի էքստրեմալ սպորտ, ոչ էլ ադրենալին: Հայաստանը մեծ հնարավորություններ է ընձեռում սպորտային զբոսաշրջության սիրահարներին:

Արագած լեռ

Արագած. Լեռնագնացությունը և ժայռամագլցումը շատ տարածված են ճանապարհորդների շրջանում: Ամենադժվար ճանապարհը վերելքն է դեպի Արագած՝ Հայաստանի ամենաբարձր կետը: Լեռը գտնվում է Արագածոտնի մարզում, որն իր գեղատեսիլ բնության շնորհիվ ժողովրդականորեն կոչվում է «Հայկական այգի»:

Լեռը թիրախ է ակտիվ տուրիզմի սիրահարների համար, և դա հասկանալի է. Արագածը բազմաթիվ տիտղոսներ ունի՝ և՛ Հայաստանի ամենաբարձր լեռն է, և՛ Անդրկովկասի ամենաբարձր լեռը: Հետաքրքիր է, որ Արագածը հանգած հրաբուխ է, որն այժմ ունի 4 գագաթ: Դրանցից ամենաբարձրը՝ հյուսիսայինը, բարձրանում է ծովի մակարդակից 4090 մետր, իսկ գագաթներից ամենացածրը՝ հարավայինը՝ 3879 մետր բարձրությամբ, ամենահաճախ այցելվողն է՝ ելքի համար մատչելի տեղանքով:

The end
THANK YOU
FOR YOUR
ATTENTION